ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՄԱԵՎՐՈՊԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՏԻՊԵՐԸ*

Սոնա Մխիթարյան

Բանալի բառեր՝ համաեվրոպական կուսակցություն, Եվրոխորհրդարան, վերազգային կուսակցություն, խորհրդարանական խմբեր, քաղաքական գաղափարախոսություն:

Համաեվրոպական կուսակցությունները ԵՄ քաղաքական համակարգի կարևորագույն տարրերից մեկն են: Ինչպես նշվում է 1992թ. Մաաստրիխտի պայմանագրում, «եվրոպական մակարդակի քաղաքական կուսակցությունները Միության ինտեգրման կարևոր գործոն են: Վերջիններս եվրոպական մակարդակում նպաստում են եվրոպական գիտակցության ձևավորմանը և արտահայտում Միության քաղաքացիների կամարտահայտությունը»[1]:

Չնայած Եվրոպական միության ինստիտուտների, Եվրոխորհրդարանի կայացումը նպաստել է համաեվրոպական կուսակցությունների ձևավորմանը: Հարկ է նշել, որ Եվրոպայում գործող քաղաքական կուսակցությունների գաղափարախոսական համագործակցությունն արդեն իսկ տասնամյակների պատմություն ուներ:

Ժամանակագրական առումով համաեվրոպական կուսակցությունների ձևավորմանն ուղղված առաջին քայլերը տեղի են ունեցել 1953թ. Աժխի և պողպատի եվրոպական համայնքի ընդհանուր վեհաժողովի (1962թ. այն վերանվանվում է Եվրոխորհրդարան) ընթացքում: Չնայած վերոնշյալ վեհաժողովը, որը ներկայիս Եվրոխորհրդարանի նախատիպն է, չէր ենթադրում կամ պարտադրում նույնանման գաղափարախոսություններով և մոտեցումներով խմբերի ստեղծում, այնուամենայնիվ վեհաժողովի անդամներն արդեն իսկ առաջին նստաշրջանի ընթացքում սկսեցին համախմբվել ըստ գաղափարախոսական դիրքորոշումների[2]: Տվյալ զարգացումները հիմք հանդիսացան, որ Վեհաժողովն ընթացակարգի կանոններում ներառի քաղաքական խմբերի ձևավորումը[3]: Ընթացակարգում քաղաքական մոտեցումների և համախոհության շուրջ ձևակերպումները մի փոքր անորոշ էին, սակայն ոչ պատահական: Դրանք նպատակ էին հետապնդում կանխել տեխնիկական խմբերի ձևավորումը, որոնց դեպքում անդամներն ունենում էին մի շարք առավելություններ միմիայն այդ խմբի անդամ լինելու համար[4]: 1965թ. Վեհաժողովում արդեն առկա էր չորս քաղաքական խումբ: Ենթադրվում է, որ այս քաղաքական խմբերի ձևավորման վրա իր ազդեցությունն է թողել նաև այն պատմական համատեքստը, որում ձևավորվել է Աժխի և պողպատի եվրոպական համայնքը:

Քաղաքական խմբերի ստեղծումն աննախադեպ երևույթ էր հետպատերազմյան ժամանակաշրջանում: Համեմատության համար նշենք, որ չնայած Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովում (հիմնադրված 1949թ.) վերոնշյալ ժամանակահատվածում արդեն գործում էին միանման գաղափարական ուղղվածություն ունեցող անդամների ոչ ֆորմալ ցանցեր՝ այնուամենայնիվ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի քաղաքական խմբերի պաշտոնական ձևավորումը տեղի է ունե-

---

* Հոդվածն ընդունվել է 23.03.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել բ.գ.դ., պրոֆեսոր Գ. Քեռյանը: 30.03.21:

նում միայն 1964 թվականին: Թեև խորհրդարանական կանոնակարգը կարևոր դեր խաղաց քաղաքական խմբերի, այնուհետև համաեվրոպական կուսակցությունների ձևավորման հարցում, այնուամենայնիվ ընթացակարգերը չկարողացան երաշխավորել վերազգային քաղաքական խմբերի համահունչ քաղաքական մշակույթների ձևավորումը: Քանի որ յուրաքանչյուր խումբ ինքնուրույն էր սահմանում խմբի անդամակցության և ձևավորման չափանիշները, ապա վերջինիս գաղափարախոսական միատարրությունը կամ տարասեռությունը պայմանավորվում էր ոչ թե Եվրոխորհրդարանի իրավական նորմերով, այլ խմբի՝ առաջ քաշած քաղաքական նախընտրություններով[5]:

1973թ. նոր անդամների՝ Միացյալ թագավորության, Իռլանդիայի և Դանիայի պատգամավորականների ներառումը Վեհաժողով, մեծ ներգործություն ունեցավ քաղաքական խմբերի չափի և ազդեցության մակարդակի վրա: Այդ շրջանում քաղաքական խմբերի կայացման ու ներկուսակցական համախմբվածության վրա ազդեցություն են թողել մի շարք ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններ: Համաձայն Աուգսբերգի համալսարանի դասախոս Մ. Ռուսի կողմից կատարված մի շարք խորհրդարանական փաստաթղթերի, քննարկումների արձանագրությունների և զեկույցների վերլուծությանը, ինչպես նաև այդ շրջանի պատգամավորների հետ ունեցած հարցազրույցներին՝ մատնանշվում են հետևյալ գործոնների կարևորությունը.

- *Սոցիալականացում:*

Պատգամավորներից յուրաքանչյուրը միջազգային խորհրդարանական հարթակ էր բերել իր սեփական ազգային խորհրդարանի մշակույթը, փորձն ու ընթացակարգերը: Նույնիսկ այն պատգամավորները, որոնք համեմատաբար սկեպտիկ էին տրամադրված եվրոինտեգրացիայի հանդեպ, ընդունում էին քաղաքական խմբերի արդյունավետությունն ու կարևորությունը:

- *Ընդհանուր նախասիրություններ:*

Չնայած մի շարք հարցեր քաղաքական խմբերի ներսում դառնում էին բանավեճի առարկաներ՝ այնուամենայնիվ հիմնական թեման, որի շուրջ ձևավորված միանման դիրքորոշումները գերիշխում էին և դառնում ներխմբային համախմբվածության գրավական, եվրոպական քաղաքական և տնտեսական ինտեգրացիան էր:

- *Աշխատանքի բաժանում:*

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ եվրոպատգամավոր լինելուց զատ Վեհաժողովի անդամները նաև համապատասխան ազգային խորհրդարանների անդամներ էին, Վեհաժողովում աշխատանքային գործունեության իրականացումը ավելի հեշտ և արդյունավետ էր տեղի ունենում խմբակային ներգրավվածության դեպքում: Քաղաքական խմբերի կայացումը, քարտուղարության և հիմնական անձնակազմի ձևավորումը վճռական դեր խաղացին Եվրոխորհրդարանի ներքին ինստիտուցիոնալ զարգացման հարցում:

- *Ներխմբային միասնությանն ուղղված խթաններ:*

Քաղաքական խմբերի ներքին ընթացակարգերն ու ավանդույթներն ինքնին հեշտացնում էին խմբի անհատ պատգամավորների առաջխաղացումը: Այսպիսով՝ այդ ընթացակարգերին հետևելը բխում էր խորհրդարանականների ռազմավարական հետաքրքրությունից: Եվրոխորհրդարանում ազգային խորհրդարանների պատգամավորներն առանձին խմբեր չէին կազմում, ավելին՝ նրանց ազգային պատվիրակությունները հիմնականում չէին համակարգում վերջիններիս գործողությունները: Բացի այդ՝ համագործակցության զարգացման կարևոր խթաններ էին եվրոպատգամավորների միջև դեռևս Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի շրջանակներում հաստատված անձնական կապերն ու ընկերական հարաբերությունները[6]: Սկզբնական շրջանում Եվրոխորհրդարանը բավականին փոքրաթիվ էր, պատգամավորներն էլ միմյանց ճանաչում էին միջազգային համագործակցության այլ հարթակներից[7]:

Այնուամենայնիվ հարկ է նշել, որ սկզբնական շրջանում Եվրոխորհրդարանում որոշ ընթացակարգեր, ինչպես նաև կուսակցությունների ազգային առաջնորդությունների սկզբունքներով անդամների նշանակման գործընթացը խոչընդոտ էին քաղաքական խմբերի հաստատման և կայացման համար: Եվ քանի որ Եվրոխորհրդարանը չէր մասնակցում գործադիր մարմնի անդամների ընտրությանը, ազգային նախարարները քիչ կամ ընդհանրապես ուշադրություն չէին դարձնում իրենց կուսակցության անդամներին, որոնք գործում էին որպես համաեվրոպական, վերազգային պատգամավորներ[8]:

Չնայած եվրոխորհրդարանականները կարողանում են հաստատել արդյունավետ գաղափարախոսական համագործակցություն, այնուամենայնիվ տվյալ ժամանակաշրջանում համաեվրոպական կուսակցությունների, ինչպես նաև Եվրոխորհրդարանի զարգացումը ԵՄ քաղաքական համակարգի ներքո որոշ դեպքերում ընկալվում էր որպես արհեստական երևույթ: Այդպիսի ընկալման հիմնական պատճառն այն էր, որ վերջիններիս կայացումն ու զարգացումը ոչ թե քաղաքական պայքարի և դրա հետագա ինստիտուցիոնալիզացման, այլ պետությունների և քաղաքական էլիտաների միջև կնքված պայմանավորվածությունների արդյունքն էր[9]:

Համաեվրոպական կուսակցությունների և Եվրոխորհրդարանի քաղաքական խմբերի ձևավորումը հիմնվել է ԵՄ անդամ պետությունների ազգային կուսակցությունների և կուսակցական համակարգերի վրա: Խմբերի ձևավորման ժամանակաշրջանում արևմտաեվրոպական քաղաքական համակարգերն ականատես են դառնում նաև այնպիսի քաղաքական պառակտումների, որոնք դժվար էր կանխատեսել (օրինակ՝ բնապահպանական հարցերի քաղաքականացումը)[10]:

Համաեվրոպական կուսակցությունների զարգացման հաջորդ փուլ է համարվում 1979թ. Եվրոխորհրդարանի ուղղակի ընտրությունների անցկացումը: Ընտրությունները բեկումնային ազդեցություն թողեցին քաղաքական խմբերի զարգացման վրա, քանի որ ոչ միայն կրկնապատկվեց պատգամավորների թիվը, այլև ձևավորվեցին նոր քաղաքական խմբեր [11]:

Եվրոխորհրդարանի ուղղակի ընտրություններից հետո համաեվրոպական կուսակցությունները հայտնվում են հետազոտողների ուշադրության կենտրոնում: Սա բացատրվում է նրանով, որ ընտրությունները և դրա անքակտելի մաս հանդիսացող քաղաքական կուսակցությունները ԵՄ ժողովրդավարական համակարգի զարգացման համար կարևորագույն նախապայման են: Նկատելի է, որ հետազոտությունները սահմանափակվել են կուսակցությունների կառուցվածքի և գործառույթների ուսումնասիրությամբ՝ բացառելով վերջիններիս կենտրոնական և տարածքային կառուցվածքները:

Համաեվրոպական կուսակցությունների գործառույթների և Եվրոխորհրդարանում նրանց դերի ամրապնդման մասին դիսկուրսը ավելի մեծ թափ է առնում Միությունում «ժողովրդավարական դեֆիցիտի» շուրջ քննարկումներում: Դեռևս մինչև ուղղակի ընտրությունների անցկացումը, բրիտանացի գիտնական և Միացյալ թագավորության խորհրդարանի նախկին պատգամավոր Դ. Մարկվանդը պնդում էր, որ համաեվրոպական քաղաքական համակարգը կլինի ժողովրդավար, եթե այն ազգային ինքնությունների և կառավարությունների շուրջ ձևավորված քաղաքական մակարդակից տեղափոխվի կուսակցական համակարգերի մրցակցության մակարդակ[12]: Չնայած մի շարք քաղաքական շրջանակներ վերոնշյալ դեֆիցիտի պակասը ուղղակիորեն կապում էին ԵՄ քաղաքական որոշումների կայացման գործընթացում քաղաքացիների չներգրավվածության հետ, սակայն չենք կարող պնդել, որ վերոնշյալ առաջնահերթությունները հանրային պահանջի արդյունքում են ձևավորվել:

Հաշվի առնելով համաեվրոպական կուսակցությունների յուրահատկությունը՝ դժվար է վերջիններիս զարգացումը դասակարգել ազգային, դասական կուսակցութ-

յունների տիպաբանությամբ: Այնուամենայնիվ, կարելի է նկատել, որ համաեվրոպական կուսակցությունները, ըստ Կացի (Զոն Հոփքինս համալսարանի դասախոս) ու Մայերի (իռլանդացի քաղաքագետ, մի շարք եվրոպական համալսարանների դասախոս) մշակած տիպաբանության[13]՝ դրսևորում են կարտել տիպի կուսակցությանը բնորոշ ներկայացուցչական դեֆիցիտ: Պատմականորեն համաեվրոպական կուսակցությունների կապը հասարակության հետ շատ թույլ է եղել կամ իսպառ բացակայել է: Ի տարբերություն ազգային կուսակցությունների՝ համաեվրոպական կուսակցությունների և քաղհասարակության միջև փոխհարաբերությունների բացակայության պատճառով նրանք չեն կարող լինել կապող օղակ կամ իրականացնել այլ համակարգային խնդիրներ:

Որպես քաղաքական կուսակցություն՝ համաեվրոպական կուսակցություններն ունեն մի քանի առանձնահատկություններ: Ի տարբերություն ազգային կուսակցությունների՝ համաեվրոպական կուսակցությունները չեն ընձեռում անհատապես անդամակցելու հնարավորություն: Կուսակցության անդամների թիվը որոշվում է կուսակցության մաս հանդիսացող ազգային կուսակցությունների անդամների թվով: Ավելին, համաեվրոպական կուսակցությունները ֆորմալ ձևով հաշվետու չեն իրենց անդամներին, սակայն հաշվետու են իրենց անդամ հանդիսացող ազգային կուսակցությունների ղեկավարներին, որոնք ընտրում են Եվրոխորհրդարանի թեկնածու պատգամավորներին և շատ հաճախ գնահատում վերջիններիս գործունեությունն ըստ ազգային կուսակցության շահերի:

Համաեվրոպական կուսակցությունները նախընտրական քարոզչության ընթացքում չունեն իրենց սեփական մեդիառեսուրսները. քարոզչությունն ու տեղեկատվության տարածումը իրականացվում է ազգային կուսակցությունների օգնությամբ[14]: Ի տարբերություն ազգային կուսակցությունների՝ համաեվրոպական կուսակցություններն իրենց բնույթով ունեն ավելի ցածր կազմակերպական մակարդակ: Դրանց կազմակերպական մակարդակի երեք հիմնական բաղադրիչներն են՝ ազգային անդամ կուսակցությունների առկայությունը, Եվրոխորհրդարանում ձևավորված քաղաքական խումբը և համաեվրոպական կուսակցության գլխամասը [15]: Մի շարք հեղինակներ հանգել են այն եզրակացության, որ համաեվրոպական կուսակցությունները, ըստ էության, համախոհ կուսակցությունների համակարգումն իրականացնող վերազգային մեխանիզմներ են, որոնց հիմնական նպատակը ոչ թե կարևոր քաղաքական որոշումների կայացումն է, այլ անդամ ազգային կուսակցությունների քաղաքականությունների առաջխաղացման հարթակ լինելը[16]: Համաեվրոպական կուսակցությունների դիրքորոշումների առաջխաղացման հաջողությունն ուղղակիորեն կապված է նրանց ներկայացվածության աստիճանից: Օրինակ՝ համաեվրոպական կուսակցությունները կարող են ազդեցություն ունենալ Եվրոպական խորհրդի որոշումների վրա, երբ մեկ առանձին կուսակցության քաղաքական առաջնորդներն իրենց ներկայացվածությամբ/թվաքանակով ավելի շատ են, քան այլ կուսակցության քաղաքական առաջնորդները: Միևնույն ժամանակ թվային, ներկայացուցչական գերազանցությունը բավարար չէ ազդեցիկ համաեվրոպական կուսակցություն լինելու համար. համատեղ նպատակներն իրագործելու համար կուսակցական ընտանիքի ղեկավարները, կառավարության գլուխները պետք է մոբիլիզացվեն: Այսպիսով՝ կարող ենք համաեվրոպական կուսակցությունները դիտարկել որպես ազգային կուսակցությունների այլանսներ, որոնք ինտենսիվորեն համագործակցում են և դիմում միասնական գործողությունների, որպեսզի ձեռք բերեն քաղաքական կշիռ և ներգործեն ԵՄ որոշում կայացնողների վրա[17]:

Համաեվրոպական կուսակցությունների ներքոնշյալ տեղակայումը ԵՄ քաղաքական համակարգի առանցքում արտահայտում է նրանց գաղափարախոսական (Ձախ-Աջ) և եվրոպամետ/եվրոսկեպտիկ (Ինտեգրացիա-Անկախություն) դիրքորոշումը: Կարելի է նկատել, որ ամենամեծ համաեվրոպական կուսակցություններն եվրոպամետ

դիրքորոշում ունեն և նրանց միջև առկա տարբերությունները հիմնականում պայմանավորված են սոցիալ-տնտեսական դիրքորոշումներով:



Գծապատկեր 1. Համաեվրոպական կուսակցությունները ԵՄ քաղաքական համակարգում[18].

X-ը ցույց է տալիս կուսակցության մոտավոր տեղակայումը առանցքում:
էլիպսները արտացոլում են յուրաքանչյուր կուսակցական ընտանիքի անդամների միջակայքերը:

Ինչ վերաբերում է եվրոպական մակարդակում կուսակցական մրցակցությանը, ազգային քաղաքականությունների Ձախ-Աջ գաղափարական հարթությունը 1979թ. ի վեր կոալիցիաների ձևավորման գերիշխող գործոնն է հանդիսացել: Իսկ երբ վտանգված են լինում Եվրոխորհրդարանի լիազորությունները, տարբեր քաղաքական խմբերի անդամ եվրոխորհրդարանականները առավել հակված են միևնույն ձևով քվեարկելու, որպեսզի Եվրոխորհրդարանը, ի համեմատ այլ ԵՄ կառույցների, հարաբերականորեն ավելի շատ իշխանություն ձեռք բերի[19]: Մյուս կողմից, անդրադառնալով ԵՄ եվրոպամետ/եվրոսկեպտիկ առանցքին՝ նշենք, որ կուսակցությունների տեղակայումը միշտ չէ, որ վերոնշյալ ձևով է արտահայտվել[20]:

Ամենամեծ և ինստիտուցիոնալ համաեվրոպական խորհրդարանական երեք կուսակցությունները՝ Եվրոպական ժողովրդական կուսակցությունը (ԵԺԿ), Եվրոպական սոցիալիստների կուսակցությունը (ԵՍԿ) ու Եվրոպայի ազատականների և ժողովրդավարների դաշինքը (ԵԱԺԴ), հանգել են միևնույն ընդհանուր արտաքին քաղաքական գաղափարների, որոնք, ըստ էության, արտացոլում են ԵՄ-ի ռազմավարական շահերը: Երեքն էլ ՆԱՏՕ-ԵՄ հարաբերությունները գնահատում են որպես անհրաժեշտ, ընդունում ԱՄՆ-ի հետ հարաբերությունների կարևորությունը, բայց միևնույն ժամանակ ընդգծում են, որ միջազգային հարթակներում ԵՄ-ն պետք է առաջ տանի առանձնահատուկ օրակարգ, ինչպես օրինակ՝ մարդու իրավունքներ, բնապահպանական հարցեր և այլն: Ի դեմս այս ընդհանուր արտաքին քաղաքական ընկալումների՝ գոյություն ունեն վերոնշյալ և այլ հարցերի հետ կապված որոշ տարբերակումներ, որոնք արտա-

հայտում են վերջիններիս ինչպես Ձախ-Աջ գաղափարախոսական, այնպես էլ եվրոպամետ-եվրոսկեպտիկ դիրքորոշումների տարբերությունները:

Վերոնշյալ համաեվրոպական խորհրդարանական կուսակցությունները, աջակցելով միևնույն ԵՄ արտաքին քաղաքական դիրքորոշումներին, ունեն որոշումների ընդունման տարբեր հիմնավորումներ և տեսլականներ:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ համաեվրոպական կուսակցությունների կայացումն ու զարգացումը տեղի է ունեցել ԵՄ-ի զարգացմանը զուգահեռ: Չնայած քաղաքական գաղափարախոսությունները դառնում են կուսակցությունների կայացման նախապայման, այնուամենայնիվ ուսումնասիրություններն արձանագրում են, որ Արևմտյան Եվրոպայում արդեն իսկ կուսակցությունների՝ տասնամյակների պատմություն ունեցող գաղափարախոսական համագործակցությունը, ինչպես նաև առկա միջխորհրդարանական կապերը համաեվրոպական կուսակցական համակարգերի զարգացման հիմքն են: Կուսակցությունների գաղափարախոսական համախմբվածության մակարդակը տարիների ընթացքում փոփոխության է ենթարկվել, ինչպես նաև յուրաքանչյուր համաեվրոպական կուսակցություն դրսևորել է գաղափարախոսական համախմբվածության տարբեր մակարդակներ: Ի տարբերություն մյուս քաղաքական կուսակցությունների՝ համաեվրոպական կուսակցություններն ունեն մի շարք առանձնահատկություններ, ինչպես օրինակ՝ ներկուսակցական կառուցվածքը, ընդհանուր համաեվրոպական ընտրազանգվածի բացակայությունն ու վերազգայնությունը:

Վերոհիշյալ քննությունը թույլ է տալիս փաստել, որ կուսակցությունների գաղափարախոսական դիրքորոշումները ԵՄ մի շարք ոլորտային քաղաքականություններում (օրինակ բնապահպանական, սոցիալ-տնտեսական, միգրացիոն և այլն) բավականին ակնառու են, սակայն երբ հարցը վերաբերում է ԵՄ արտաքին քաղաքականությանը, համաեվրոպական կուսակցությունների դիրքորոշումների տարբերությունը պայմանավորված է ոչ թե նրանց Ձախ-Աջ գաղափարախոսական առանցքի վրա տեղակայմամբ, այլ վերջիններիս եվրոսկեպտիկ կամ եվրոպամետ/ԵՄ-ի կողմնակից լինելու հանգամանքով: Միևնույն ժամանակ գտնում ենք, որ եվրոսկեպտիկ/եվրոպամետ չափորոշիչը, չնայած որ տարբերակում է կուսակցությունների հիմնական արտաքին քաղաքական դիրքորոշումները, այնուամենայնիվ ընդհանրական է: Կուսակցությունները, միևնույն եվրոպամետ/եվրոսկեպտիկ դիրքորոշումն ունենալով հանդերձ, ունեն արտաքին քաղաքական դիրքորոշումների, պատկերացումների և նպատակների մի շարք տարբերություններ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Treaty on European Union. Article 138a. Official Journal C 191, 29/07/1992 P. 0001 – 0110. Retrieved 3 January 2020, from https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex:11992M/TXT.
2. C. Salm, The ECSC Common Assembly's decision to create political groups. European Parliament History Series, 2019, p. 2.
3. Տե՛ս նույնը, էջ 5:
4. L. Tilindyte, Rules on political groups in the EP. European Parliamentary research service, 2019, p. 3.
5. L. Bardi et al, How to create a Transnational party system, Study. Policy department of Citizens' rights and constitutional affairs, European Parliament, 2010, p. 13.
6. E. B. Haas, The uniting of Europe: political, social and economical forces 1950-1957, Notre Dame, University of Notre Dame Press, p. 414.
7. M. Roos, Intra-Party Group Unity in the European Parliament prior to its first direct elections in 1979, Parliamentary affairs Volume 72, Issue 2, 2019, p. 469-476.

8. E. B. Haas, The uniting of Europe: political, social and economical forces 1950-1957, Notre Dame, University of Notre Dame Press, p. 433-434.
9. Peshenikov, A. and Zhukovskiy, I, Supranational party system of the EU. Baltic Region, 2, 2016, p. 99-111.
10. L. Bardi et al, How to create a Transnational party system, Study. Policy department of Citizens' rights and constitutional affairs, European Parliament, 2010, p. 14.
11. A. Kreppel, The European Parliament and Supranational Party System. A Study in institutional development, Cambridge University Press 2002, p. 183-185.
12. D. Marquand, "Towards a Europe of the Parties", in Political Quarterly, vol. 49, no. 4, 1978, pp. 425-45.
13. Katz, Richard S. & Mair, Peter Changing models of party organizations and party democracy: the emergence of the cartel party, in Party Politics 1, 1995, 5-28.
14. L. Bardi and E. Calossi. Models of Party Organization and Europarties. Activating the Citizen: Dilemmas of Participation in Europe and Canada (J. DeBardeleben and J. H. Pammett (eds.)), 2009, p. 170.
15. M. Öhlén, The New Institutionalisms and Europarties. Conference paper, 2008, p. 9, Retrieved 11 November 2020, from https://www.researchgate.net/publication/276160329_The_New_Institutionalisms_and_Europarties.
16. Carter, E. and Ladrech, R., "Government change, organizational continuity: The limited Europeanization of British political parties", in The Europeanization of National Political Parties (Ed. Poguntke et al.), Routledge, 2006, p. 80.
17. K. M. Johansson, Europarties: A research note, 2015, p. 11; 17, Retrieved 7 November 2020, from http://www.diva-portal.org/smash/get/diva2:850844/FULLTEXT02.pdf.
18. S. Hix, Dimensions and Alighnments in European Union Politics: Cognitive constraints and Partisan Responses. Working Paper Series in European Union Studies Volume 1, Number 3, 1998, p. 17, Retrieved 2 January 2021, from http://aei.pitt.edu/8992/1/hix.pdf.
19. S. Hix, A Supranational party system and the legitimacy of the European Union, in International Spectator, 2002 p. 17.
20. Ladrech, Partisanship and Party Formation in European Union Politics in Comparative Politics, Vol. 29 No. 2, 1997, p. 174.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Համաեվրոպական կուսակցությունների ձևավորման գործընթացը և տիպերը

Սոնա Մխիթարյան

Հոդվածը նվիրված է համաեվրոպական կուսակցությունների ձևավորման և զարգացման գործընթացին, ինչպես նաև այդ կուսակցությունների տիպաբանական առանձնահատկություններին: Հոդվածում քննության են ենթարկվել այն պատմական, սոցիալական և քաղաքական գործոնները, որոնք ազդեցություն են թողել համաեվրոպական կուսակցությունների կայացման գործընթացի վրա: Որպես վերազգային քաղաքական կուսակցություններ՝ համաեվրոպական կուսակցություններն ունեն մի շարք առանձնահատկություններ, ինչպիսին են՝ կուսակցությունների անդամակցության կարգը, ներքին կազմակերպական մակարդակը, ընտրապայքարում մեդիա և քարոզչական ռեսուրսների բաշխումն ու օգտագործումը, Եվրոխորհրդարանում քաղաքական խմբերի ձևավորումը և այլն: Քննության արդյունքում կարելի է նաև փաստել, որ համաեվրոպական կուսակցությունների միջև առկա տարբերությունները պայմանա-

վորված են ինչպես գաղափարախոսական Ձախ-Աջ, այնպես էլ եվրոպամետ/եվրոս-կեպտիկ դիրքորոշումներով:

РЕЗЮМЕ

Процесс формирования общеевропейских политических партий и их типология

Сона Мхитарян

Ключевые слова: общеевропейская партия, Европейский парламент, парламентские фракции, политическая идеология.

Статья посвящена процессу формирования и развития общеевропейских партий и их типологическим особенностям. В статье исследуются исторические, социальные и политические факторы, повлиявшие на процесс формирования общеевропейских партий. Как транснациональные политические партии, общеевропейские партии отличаются различными характеристиками, такими как порядок вступления в партию, внутренний организационный уровень, распределение и использование СМИ и информационных ресурсов во время избирательных кампаний, формирование политических групп в Европарламенте и т.д. В результате исследования можно констатировать, что различия между общеевропейскими партиями обусловлены как их идеологическими Левыми/Правами, так и проевропейскими/евроскептическими позициями.

SUMMARY

The Formation Process of Pan-European Parties and their Typology

Sona Mkhitaryan

Keywords: pan-European party, European parliament, transnational party, parliamentary groups, political ideology.

The article is devoted to the formation and development process of pan-European parties as well as to typological features of those parties. The article examines the historical, social, and political factors that have influenced the formation process of pan-European parties. As transnational political parties, pan-European parties have various characteristic features such as party membership procedure, internal organizational level, distribution and use of media and information resources during the election campaigns, formation of political groups in the European Parliament, etc. As a result of the examination, it can be stated that the differences between the pan-European parties are conditioned by both their ideological Left/Right and pro-European/Eurosceptic positions.